Թողարկման 19-րդ տարի

ՀՀ կենտրոնական բանկի տեղեկագիր

2012

փետրվար

թիվ 2 (162)

Բովանդակություն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ
ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ
ԿԲ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

4 ՀՀ ԿԲ խորհրդի որոշումները վերաֆինանսավորման տոկոսադրույքի, «Իդրամ» ՍՊԸ-ի մի շարք մասնաճյուղեր հաշվառելու, ինչպես նաև «Եվրոպարկ» առևտրի կենտրոն ԲԲԸ-ին և «Ալեքս Գրիգ» ՍՊԸ-ին արտարժույթի առուվաճառքի լիցենզիաներ տրամադրելու վերաբերյալ

4 ՀՀ ԿԲ խորհրդի և նախագահի որոշումները «Գոլդ Քոնսալթինգ» ՍՊԸ-ին գրավատան կազմակերպման լիցենզիա, որոշ ՓԲԸ-ների «Յունիստրիմ» արտասահմանյան վճարահաշվարկային համակարգում մասնակցության թույլտվություն տրամադրելու, ինչպես նաև որոշ ՓԲԸ-ների մի շարք ներկայացուցչություններ և մասնաճյուղեր գրանցելու վերաբերյալ

4 ՀՀ ԿԲ նախագահի որոշումները 2 ՓԲԸ-ների և 1 ՍՊԸ-ի նախազգուշացում հայտարարելու և 3 ՓԲԸ-ների նկատմամբ տուգանք կիրառելու վերաբերյալ

5 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 10-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի մարտի 11-ի թիվ 71-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին»

6 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 11-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի փետրվարի 26-ի թիվ 50-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին»

7 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 31-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի հունվարի 15-ի թիվ 15-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին»

8 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 32-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2011 թվականի մայիսի 2-ի թիվ 115-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին»

9 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 33-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի մայիսի 4-ի թիվ 135-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին»

10 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 34-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի մայիսի 15-ի թիվ 138-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին»

10 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 35-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2005 թվականի ապրիլի 12-ի թիվ 145-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին»

11 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 36-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի հուլիսի 1-ի թիվ 194-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին»

12 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 37-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2011 թվականի հոկտեմբերի 25-ի թիվ 285-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին»

13 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 38-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի հոկտեմբերի 30-ի թիվ 344-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին»

15 ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ
ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ԿԲ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

- ***Անփոփոխ է թողնվել*** վերաֆինանսավորման տոկոսադրույքը՝ 8% (որոշում թիվ 19Ա):
- ***Հաշվառվել են*** «Իդրամ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության «Արաբկիր ՎՇ», «Շենգավիթ ՎՇ» և «Քաղաքապետարան» մասնաճյուղերը (որոշում թիվ 22Ա):
- ***Արտարժույթի առուվաճառքի լիցենզիաներ են տրամադրվել*** «Եվրոպարկ» առևտրի կենտրոն բաց բաժնետիրական և «Ալեքս Գրիգ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություններին (որոշումներ թիվ 23Ա, 234Ա):
- ***Գրավատան կազմակերպման լիցենզիա է տրամադրվել*** «Գոլդ Քոնսալթինգ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը (որոշում թիվ 28Ա):
- ***«Յունիստրիմ» արտասահմանյան վճարահաշվարկային համակարգում մասնակցության թույլտվություն է տրամադրվել*** «Հայբիզնեսբանկ» և «ՎՏԲ-Հայաստան բանկ» փակ բաժնետիրական ընկերություններին (որոշումներ թիվ 41Ա, 42Ա):
- ***Գրանցվել են*** «Ինգո Արմենիա» ապահովագրական փակ բաժնետիրական ընկերության «Արաբկիր», «Արագածոտն», «Արմավիր», «Գեղարքունիք», «Կոտայք», «Շիրակ», «Տավուշ» ներկայացուցչությունները և «Բիբլոս բանկ Արմենիա», «Կոնվերս բանկ» փակ բաժնետիրական ընկերությունների «Կոմիտաս» և «Ստեփանակերտ» մասնաճյուղերը (որոշումներ թիվ 1/97Ա, 1/122Ա, 1/157Ա):
- Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջները խախտելու համար 2 ապահովագրական փակ բաժնետիրական և 1 սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների ***հայտարարվել է նախազգուշացում***՝ հետագայում նման խախտումները բացառելու հանձնարարականով (որոշումներ թիվ 1/79Ա, 1/135Ա, 1/147Ա) և 3 ապահովագրական փակ բաժնետիրական ընկերությունների նկատմամբ կիրառվել է տուգանք 400000 ՀՀ դրամ ընդհանուր գումարի չափով (որոշումներ թիվ 1/81Ա, 1/118Ա, 1/136Ա):

*Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի մարտի 11-ի թիվ 71-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին**

Նպատակ ունենալով բանկերում ներդնել սթրես-թեստավորման գործընթացը որպես ռիսկերի կառավարման գործիք և ապահովել դրա կիրառման արդյունավետությունը և նպատակայնությունը, հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» և «իբ» կետերը և ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով և 70-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը ո ր ո շ ու մ է .

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի մարտի 11-ի «Բանկերի ներքին հսկողության իրականացման նվազագույն պայմանները հաստատելու, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2004 թվականի հոկտեմբերի 12-ի թիվ 250-Ն և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 1999 թվականի մարտի 16-ի թիվ 40 որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 71-Ն որոշման 1-ին կետով հաստատված «Բանկերի ներքին հսկողության իրականացման նվազագույն պայմանները» Հավելված 1-ում (Այսուհետ՝ Հավելված) կատարել հետևյալ փոփոխությունը և լրացումները.

1) Հավելվածի 18-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«18. Բանկն իրականացնում է սթրես-թեստավորում առնվազն հետևյալ ռիսկերի գծով.

1) վարկային ռիսկ
2) արտարժութային ռիսկ
3) տոկոսադրույքի ռիսկ
4) գնային ռիսկ
5) իրացվելիության ռիսկ
6) վարակի ռիսկ (Հայաստանի Հանրապետության տարածքում գործող որևէ բանկի ֆինանսական խնդիրների հնարավոր բացասական ազդեցությունը տվյալ բանկի կապիտալի և (կամ) շահույթի վրա):

2) Հավելվածը լրացնել 18.1-18.10 կետերով՝ հետևյալ բովանդակությամբ.

«18.1. Վարկային, տոկոսադրույքի, գնային և վարակի ռիսկերի գծով սթրես-թեստավորումն իրականացվում է առնվազն եռամսյակային կտրվածքով, իսկ արտարժութային և իրացվելիության ռիսկերի գծով սթրես-թեստավորումն իրականացվում է առնվազն ամսական կտրվածքով (առաջիկա մեկ տարվա ժամանակային հորիզոնով): Ընդ որում, յուրաքանչյուր ռիսկի գծով սթրես-թեստավորումն իրականացվում է՝ հիմք ընդունելով բանկի կանխատեսումների վրա հիմնված հիմնական սցենարը, որը ենթարկվում է ցնցումների՝ արտացոլելով ծայրահեղ, բայց հավանական իրավիճակների առնվազն երկու մակարդակներ (միջին և խիստ):

18.2. Սթրես-թեստերը կարող են լինել պարզ՝ զգայունության վերլուծություն՝ կախված կոնկրետ ռիսկի գործոնի փոփոխությունից, և առավել բարդ, որոնք հաշվի են առնում տարբեր ռիսկային գործոնների, այդ թվում՝ համակարգային, փոխազդեցության արդյունքները: Եթե բանկի կողմից որոշակի ռիսկի գծով սթրես-թեստավորման գործընթացում դիտարկվող իրավիճակը կարող է ազդեցություն ունենալ բանկի գործունեությանն առնչվող այլ ռիսկերի վրա, ապա բանկը պետք է գնահատի ինչպես յուրաքանչյուր ռիսկի գծով ազդեցություններն առանձին-առանձին, այնպես էլ համընդհանուր ազդեցությունը:

18.3. Բացի որոշակի պարբերականությամբ իրականացվող սթրես-թեստերի, բանկերը կարող են իրականացնել նաև միանգամյա սթրես-թեստեր:

18.4. Սթրես-թեստավորման համակարգը պետք է կազմի բանկի ռիսկերի կառավարման գործընթացի մի մասը, նպաստի ռիսկերի կառավարման որակի բարելավմանը, ապահովի ռիսկերի կառավարման լրացուցիչ գործիքներ: Սթրես-թեստերի համար օգտագործվող սցենարները պետք է լինեն ապագային միտված, ծայրահեղ, բայց հավանական, և թույլ տան գնահատել բանկի զգայունությունը ցնցումային իրավիճակների նկատմամբ:

18.5. Բանկի ներքին իրավական ակտերով սահմանվում է, որ բանկի խորհուրդը պատասխանատու է սթրես-թեստավորման արդյունավետ գործընթացի իրականացման համար անհրաժեշտ պայմանների

---

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2012 թ. հունվարի 24-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 6.02.2012 թ. (ՀՀԳՏ N5 (418), 15.02.2012):

ապահովման համար, իսկ գործադիր մարմինը հաշվետու է սթրես-թեստերի հետևողական իրականացման համար:

18.6. Սթրես-թեստերի օգտագործումը պարտադիր է այն առկա կամ պոտենցիալ ռիսկերը բացահայտելու համար, որոնք չեն բացահայտվի միայն պատմական շարքերի վրա հիմնված ռիսկերի կառավարման վիճակագրական գործիքների օգտագործման դեպքում, երբ պատմական տվյալները չեն ընդգրկում սթրեսային ժամանակահատվածներ: Մասնավորապես, համապատասխան սթրես-թեստավորման պետք է ենթարկվի ներդրվող գործիքների կամ գործառնությունների ռիսկայնությունը:

18.7. Սթրես-թեստերի հիմքում ընկած հիմնական ենթադրությունները, հիմնական սցենարները, սթրես-թեստերի ազդեցության գնահատման համար օգտագործվող հիմնական դատողությունները, ինչպես նաև երևույթների տեղի ունենալու հավանականությունը գնահատելու մեթոդաբանությունը պետք է փաստաթղթավորվեն և շրջանառվեն գործընթացի համար պատասխանատու անձանց միջև: Սթրես-թեստերի արդյունքները պետք է շրջանառվեն բանկի շահագրգիռ ստորաբաժանումների միջև, ինչպես նաև հասանելի լինեն վերահսկող մարմնին:

18.8. Բանկի ներքին իրավական ակտերում պետք է նկարագրվեն սթրես-թեստերի իրականացման սկզբունքները, սթրես-սցենարների որոշման ընթացակարգը, գործընթացի հիմնական պատասխանատուները, սթրես-թեստերի արդյունքների կիրառման եղանակները կառավարչական որոշումների կայացման, ինչպես նաև ռիսկերի կառավարման գործընթացներում: Բանկի ներքին իրավական ակտերով պետք է նաև սահմանվեն սթրես-թեստերի արդյունքները շահագրգիռ ստորաբաժանումներին հասանելի դարձնելու և Կենտրոնական բանկին տրամադրելու ընթացակարգերը:

18.9. Սթրես-թեստավորման արդյունքները պետք է ունենան կիրառական նշանակություն, այսինքն՝ ազդեցություն ունենան ղեկավարության որոշումների կայացման վրա՝ ներառյալ բանկի խորհրդի և գործադիր մարմնի կողմից կայացվող ռազմավարական որոշումները: Մասնավորապես՝ սթրես-թեստերը պետք է օգտագործվեն բանկի «ռիսկի ախորժակը» որոշելու կամ առանձին ռիսկերի գծով սահմանաչափեր սահմանելու համար: Սթրես-թեստերի արդյունքները պետք է կիրառվեն նաև երկարաժամկետ բիզնես-պլանների կազմման, ինչպես նաև կապիտալի և իրացվելիության պլանավորման ժամանակ:

18.10. Իրականացված սթրես-թեստերի արդյունքների (ազդեցությունը տնտեսական նորմատիվների մեծության վրա և (կամ) գնահատված վնասի մեծությունը) հիման վրա բանկերը պետք է մշակեն սթրեսային (արտակարգ) իրավիճակների ի հայտ գալու դեպքում բանկի կողմից իրականացվելիք միջոցառումների ծրագրեր: Սթրեսային (արտակարգ) իրավիճակների ծրագրերը պարբերաբար պետք է թարմացվեն և փորձարկվեն՝ պարզելու համար դրանց արդյունավետությունը:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
26 հունվարի 2012 թ., N 10-Ն

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄԸ

*Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի փետրվարի 26-ի թիվ 50-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին**

Նպատակ ունենալով վերլուծել բանկերի կողմից իրականացվող սթրես-թեստերի արդյունքները, հիմք ընդունելով «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի 55-րդ հոդվածը, ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով և ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով և 70-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը ո ր ո շ ո ւ մ է .

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2012 թ. հունվարի 24-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 6.02.2012 թ. (ՀՀԳՏ N5 (418), 15.02.2012):

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի փետրվարի 26-ի ««Բանկերի հաշվետվությունները, դրանց ներկայացումը և հրապարակումը» կանոնակարգ 3-ը հաստատելու մասին» թիվ 50-Ն որոշմամբ հաստատված «Բանկերի հաշվետվությունները, դրանց ներկայացումը և հրապարակումը» կանոնակարգ 3-ում (այսուհետ՝ Կանոնակարգ 3) կատարել հետևյալ լրացումները.

1) Կանոնակարգ 3-ի 2-րդ կետում ընդգրկված աղյուսակը լրացնել նոր տողով՝ հետևյալ բովանդակությամբ.

30	Հաշվետվություն սթրես-թեստերի վերաբերյալ	34	եռամսյակային

2) Կանոնակարգ 3-ի 3-րդ կետի առաջին նախադասությունը «համապատասխան» բառից հետո լրացնել «, բացառությամբ Թիվ 34 հաշվետվության (Հաշվետվություն սթրես-թեստերի վերաբերյալ), որը ներկայացվում է ազատ ոճով «էքս էլ էս» ֆորմատի ֆայլերով» բառերով:

3) Կանոնակարգ 3-ը լրացնել նոր 33-րդ կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«33. Թիվ 34 հաշվետվությունը (Հաշվետվություն սթրես-թեստերի վերաբերյալ) ներկայացվում է ազատ ոճով, ընդ որում՝ հաշվետվությամբ ներկայացվող սթրես-թեստերը պետք է համապատասխանեն Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թ. մարտի 11-ի թիվ 71-Ն որոշմամբ հաստատված «Բանկերի ներքին հսկողության իրականացման նվազագույն պայմանների» 18-18.2-րդ կետերի պահանջներին: Առանձին ռիսկերի գծով ամսական կտրվածքով իրականացվող սթրես-թեստերը Թիվ 34 հաշվետվության մեջ ներկայացվում են հաշվետու եռամսյակի վերջին ամսվա համար իրականացված սթրես-թեստավորման արդյունքներով (տվյալ պահին առկա տեղեկատվության հիման վրա):»:

4) Կանոնակարգ 3-ի 34-րդ կետում.

ա. առաջին նախադասությունը «ձև թիվ 8 հաշվետվության» բառերից հետո լրացնել «և ձև թիվ 34 հաշվետվության» բառերով,

բ. լրացնել նոր պարբերություն՝ հետևյալ բովանդակությամբ.

«Ձև թիվ 34 հաշվետվության ներկայացման ժամկետը սահմանվում է մինչև հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող ամսվա 12-րդ աշխատանքային օրը (ներառյալ):»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
26 հունվարի 2012 թ., N 11-Ն

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄԸ

*Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի հունվարի 15-ի թիվ 15-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին**

Նպատակ ունենալով որակավորման քննություններին թեկնածուների հերթագրման կարգը դարձնել առավել արդյունավետ և իրականացնել այն միասնական ձևով, հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի» մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետը և ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով և 70-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը ո ր ո շ ու մ է .

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի հունվարի 15-ի ««Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց, օպերատորի, Կենտրոնական դեպոզիտարիայի ղեկավարների ու ներդրումային ծառայություններ մատուցող ֆիզիկական անձանց որակավորումը, նրանց մասնագիտական համապատասխանության չափանիշներն ու մասնագիտական որակավորման

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2012 թ. փետրվարի 7-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 20.02.2012 թ. (ՀՀՊՏ N6 (419), 01.03.2012):

ստուգման թեմաների ցանկը» կանոնակարգ 4/05-ը հաստատելու մասին» թիվ 15-Ն որոշմամբ հաստատված «Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց, օպերատորի, Կենտրոնական դեպոզիտարիայի ղեկավարների ու ներդրումային ծառայություններ մատուցող ֆիզիկական անձանց որակավորումը, նրանց մասնագիտական համապատասխանության չափանիշներն ու մասնագիտական որակավորման ստուգման թեմաների ցանկը» կանոնակարգ 4/05-ի 15-րդ կետում կատարել հետևյալ փոփոխությունները.

1) առաջին պարբերությունից հանել «կամ հեռախոսով» բառերը,

2) 2-րդ ենթակետն ուժը կորցրած ճանաչել,

3) 3-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.
«3) Հերթագրվելու համար թեկնածուները հայտնում են հետևյալ տեղեկությունները.
ա. անուն, ազգանուն,
բ. որակավորման տեսակ,
գ. քննությանը մասնակցելու ամիս, օր, ժամ՝ ըստ հրապարակված ցանկի (ցանկության դեպքում),
դ. հեռախոսահամար,
ե. անձնագրի կամ անձը հաստատող այլ փաստաթղթի տվյալները,
զ. էլեկտրոնային փոստի (առկայության դեպքում) հասցեն»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2012 թվականի ապրիլի 1-ին:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
10 փետրվարի 2012 թ., N 31-Ն

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄԸ

*Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2011 թվականի մայիսի 2-ի թիվ 115-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին**

Նպատակ ունենալով որակավորման քննություններին թեկնածուների հերթագրման կարգը դարձնել առավել արդյունավետ և իրականացնել այն միասնական ձևով, հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետը և ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով և 70-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2011 թվականի մայիսի 2-ի ««Ներդրումային ֆոնդի կառավարիչների և պահառուների ղեկավարների ու ներդրումային ֆոնդի կառավարման գործունեություն իրականացնող և ներդրումային ֆոնդի պահառություն իրականացնող ֆիզիկական անձանց որակավորումը, նրանց մասնագիտական համապատասխանության չափանիշներն ու մասնագիտական որակավորման ստուգման թեմաների ցանկը» կանոնակարգ 10/05-ը հաստատելու մասին» թիվ 115-Ն որոշմամբ հաստատված «Ներդրումային ֆոնդի կառավարիչների և պահառուների ղեկավարների ու ներդրումային ֆոնդի կառավարման գործունեություն իրականացնող և ներդրումային ֆոնդի պահառություն իրականացնող ֆիզիկական անձանց որակավորումը, նրանց մասնագիտական համապատասխանության չափանիշներն ու մասնագիտական որակավորման ստուգման թեմաների ցանկը» կանոնակարգ 10/05-ի մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) 15-րդ կետից հանել «կամ հեռախոսով» բառերը,

2) 17-րդ կետն ուժը կորցրած ճանաչել,

---

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2012 թ. փետրվարի 7-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 20.02.2012 թ. (ՀՀԳՏ N6 (419), 01.03.2012):

3) 18-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.
«3) Հերթագրվելու համար թեկնածուները հայտնում են հետևյալ տեղեկությունները.
ա. անուն, ազգանուն,
բ. որակավորման տեսակ,
գ. քննությանը մասնակցելու ամիս, օր, ժամ՝ ըստ հրապարակված ցանկի (ցանկության դեպքում),
դ. հեռախոսահամար,
ե. անձնագրի կամ անձը հաստատող այլ փաստաթղթի տվյալները,
զ. էլեկտրոնային փոստի (առկայության դեպքում) հասցեն»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2012 թվականի ապրիլի 1-ին:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
10 փետրվարի 2012 թ., N 32-Ն

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄԸ

*Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի մայիսի 4-ի թիվ 135-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին**

Նպատակ ունենալով որակավորման քննություններին թեկնածուների հերթագրման կարգը դարձնել առավել արդյունավետ և իրականացնել այն միասնական ձևով, հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետը և ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով և 70-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թ. մայիսի 4-ի ««Արտարժույթի դիլերային-բրոքերային առուվաճառքի գործունեության լիցենզավորումը և կարգավորումը» կանոնակարգ 12-ը հաստատելու մասին» թիվ 135-Ն որոշմամբ հաստատված «Արտարժույթի դիլերային-բրոքերային առուվաճառքի գործունեության լիցենզավորումը և կարգավորումը» կանոնակարգ 12-ի 20-րդ կետում կատարել հետևյալ փոփոխությունները.

1) առաջին պարբերությունից հանել «կամ հեռախոսով» բառերը,

2) 2-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.
«2) Հերթագրվելու համար թեկնածուները հայտնում են հետևյալ տեղեկությունները.
ա. անուն, ազգանուն,
բ. որակավորման տեսակ,
գ. քննությանը մասնակցելու ամիս, օր, ժամ՝ ըստ հրապարակված ցանկի (ցանկության դեպքում),
դ. հեռախոսահամար,
ե. անձնագրի կամ անձը հաստատող այլ փաստաթղթի տվյալները,
զ. էլեկտրոնային փոստի (առկայության դեպքում) հասցեն»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2012 թվականի ապրիլի 1-ին:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
10 փետրվարի 2012 թ., N 33-Ն

---

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2012 թ. փետրվարի 7-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 20.02.2012 թ. (ՀՀԳՏ N6 (419), 01.03.2012):

*Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի մայիսի 15-ի թիվ 138-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին**

Նպատակ ունենալով որակավորման քննություններին թեկնածուների հերթագրման կարգը դարձնել առավել արդյունավետ և իրականացնել այն միասնական ձևով, հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետը և ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով և 70-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի մայիսի 15-ի ««Արտարժույթի առուվաճառքի գործառնությունների լիցենզավորումը և կարգավորումը» կանոնակարգ 10-ը հաստատելու մասին» թիվ 138-Ն որոշմամբ հաստատված «Արտարժույթի առուվաճառքի գործառնությունների լիցենզավորումը և կարգավորումը» կանոնակարգ 10-ի 20-րդ կետում կատարել հետևյալ փոփոխությունները.

1) առաջին պարբերությունից հանել «կամ հեռախոսով» բառերը,

2) 2-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.
«2) Հերթագրվելու համար թեկնածուները հայտնում են հետևյալ տեղեկությունները.
ա. անուն, ազգանուն,
բ. որակավորման տեսակ,
գ. քննությանը մասնակցելու ամիս, օր, ժամ՝ ըստ հրապարակված ցանկի (ցանկության դեպքում),
դ. հեռախոսահամար,
ե. անձնագրի կամ անձը հաստատող այլ փաստաթղթի տվյալները,
զ. էլեկտրոնային փոստի (առկայության դեպքում) հասցեն»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2012 թվականի ապրիլի 1-ին:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
10 փետրվարի 2012 թ., N 34-Ն

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄԸ

*Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2005 թվականի ապրիլի 12-ի թիվ 145-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին**

Նպատակ ունենալով որակավորման քննություններին թեկնածուների հերթագրման կարգը դարձնել առավել արդյունավետ և իրականացնել այն միասնական ձևով, հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետը և ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով և 70-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2005 թվականի ապրիլի 12-ի ««Բանկերի և օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի գրանցումն ու լիցենզավորումը, բանկերի մասնա-

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2012 թ. փետրվարի 7-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 20.02.2012 թ. (ՀՀԳՏ N6 (419), 01.03.2012):

ճյուղերի և ներկայացուցչությունների գրանցումը, բանկերի և օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի ղեկավարների որակավորումը և գրանցումը» կանոնակարգ 1-ը հաստատելու մասին» թիվ 145-Ն որոշմամբ հաստատված «Բանկերի և օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի գրանցումն ու լիցենզավորումը, բանկերի մասնաճյուղերի և ներկայացուցչությունների գրանցումը, բանկերի և օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի ղեկավարների որակավորումը և գրանցումը» կանոնակարգ 1-ի 61-րդ կետում կատարել հետևյալ փոփոխությունները.

1) առաջին պարբերությունից հանել «կամ հեռախոսով» բառերը,

2) 2-րդ ենթակետն ուժը կորցրած ճանաչել,

3) 3-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.
«3) Հերթագրվելու համար թեկնածուները հայտնում են հետևյալ տեղեկությունները.
ա. անուն, ազգանուն,
բ. որակավորման տեսակ,
գ. քննությանը մասնակցելու ամիս, օր, ժամ՝ ըստ հրապարակված ցանկի (ցանկության դեպքում),
դ. հեռախոսահամար,
ե. անձնագրի կամ անձը հաստատող այլ փաստաթղթի տվյալները,
զ. էլեկտրոնային փոստի (առկայության դեպքում) հասցեն»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2012 թվականի ապրիլի 1-ին:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
10 փետրվարի 2012 թ., N 35-Ն

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄԸ

*Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի հուլիսի 1-ի թիվ 194-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին**

Նպատակ ունենալով որակավորման քննություններին թեկնածուների հերթագրման կարգը դարձնել առավել արդյունավետ և իրականացնել այն միասնական ձևով, հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետը և ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով և 70-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 2008 թ. հուլիսի 1-ի ««Վարկային կազմակերպությունների գրանցման ու լիցենզավորման, վարկային կազմակերպությունների մասնաճյուղերի և ներկայացուցչությունների գրանցման, վարկային կազմակերպությունների կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերելուն համաձայնություն տալու, վարկային կազմակերպությունների ղեկավարների որակավորման ու գրանցման կարգը, վարկային կազմակերպությունների գործունեության կանոնակարգը, վարկային կազմակերպությունների գործունեության վայրի և տեխնիկական հագեցվածության պահանջները» կանոնակարգ 13-ը հաստատելու մասին» թիվ 194-Ն որոշմամբ հաստատված «Վարկային կազմակերպությունների գրանցման ու լիցենզավորման, վարկային կազմակերպությունների մասնաճյուղերի և ներկայացուցչությունների գրանցման, վարկային կազմակերպությունների կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերելուն համաձայնություն տալու, վարկային կազմակերպությունների ղեկավարների որակավորման ու գրանցման կարգը, վարկային կազմակերպությունների գործունեության կանոնակարգը, վարկային կազմակերպությունների գործունեության վայրի և տեխնիկական հագեցվածության պահանջները» կանոնակարգ 13-ի 35-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«35. Թեկնածուները (բացառությամբ խորհրդի նախագահի և խորհրդի անդամի թեկնածուների) քննությանը մասնակցելու համար կարող են հերթագրվել Կենտրոնական բանկի ինտերնետային կայքի համապատասխան էջում տվյալներ մուտքագրելով:

---

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2012 թ. փետրվարի 7-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 20.02.2012 թ. (ՀՀԳՏ N6 (419), 01.03.2012):

1) Քննություններ անցկացնելու նպատակով յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանում են քննության ստույգ օրեր, որի մասին տեղեկությունները հրապարակվում են Կենտրոնական բանկի ինտերնետային կայքում:

2) Հերթագրվելու համար թեկնածուները հայտնում են հետևյալ տեղեկությունները.
1) անուն, ազգանուն,
2) որակավորման տեսակ,
3) քննությանը մասնակցելու ամիս, օր, ժամ՝ ըստ հրապարակված ցանկի (ցանկության դեպքում),
4) հեռախոսահամար,
5) անձնագրի կամ անձը հաստատող այլ փաստաթղթի տվյալները,
6) էլեկտրոնային փոստի (առկայության դեպքում) հասցեն:

3) Թեկնածուի կողմից նշված օրը և (կամ) ժամին քննության անցկացման անհնարինության դեպքում կամ թեկնածուի կողմից քննությանը մասնակցելու օր և (կամ) ժամ չնշելու դեպքում Թեստավորման ծառայության աշխատակիցը Կենտրոնական բանկում հերթագրվելու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում ծանուցում է թեկնածուին քննության անցկացման հնարավոր այլ օրվա և (կամ) ժամի մասին:

4) Թեկնածուները քննությանը կարող են մասնակցել՝ քննության օրը ներկայացնելով հետևյալ փաստաթղթերը.
ա. անձնագիր կամ անձը հաստատող այլ փաստաթուղթ և դրա պատճենը,
բ. պետական տուրքի վճարումը հավաստող փաստաթուղթ:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2012 թվականի ապրիլի 1-ին:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
10 փետրվարի 2012 թ., N 36-Ն

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄԸ

*Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2011 թվականի հոկտեմբերի 25-ի թիվ 285-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին**

Նպատակ ունենալով որակավորման քննություններին թեկնածուների հերթագրման կարգը դարձնել առավել արդյունավետ և իրականացնել այն միասնական ձևով, հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետը և ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով և 70-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը ո ր ո շ ու մ է .

1. ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 2011 թ. հոկտեմբերի 25-ի ««Վճարահաշվարկային կազմակերպությունների լիցենզավորումը, մասնաճյուղերի հաշվառումը, վճարահաշվարկային կազմակերպությունների ղեկավարների որակավորումը, վճարահաշվարկային կազմակերպությունների գործունեության վայրին ներկայացվող տեխնիկական հագեցվածության, տարածքային, ծրագրային, անվտանգության պահանջները, ինչպես նաև վճարահաշվարկային կազմակերպությունների լիցենզիաների գրանցամատյանի ձևը, վարման կարգը, դրանում ներառվող տեղեկությունները» կանոնակարգ 17/01 հաստատելու, ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 2005 թ. մայիսի 24-ի թիվ 240-Ն և ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 2005 թ. մայիսի 24-ի թիվ 241-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 285-Ն որոշմամբ հաստատված «Վճարահաշվարկային կազմակերպությունների լիցենզավորումը, մասնաճյուղերի հաշվառումը, վճարահաշվարկային կազմակերպությունների ղեկավարների որակավորումը, վճարահաշվարկային կազմակերպությունների գործունեության վայրին ներկայացվող տեխնիկական հագեցվածության, տարածքային, ծրագրային, անվտանգության պահանջները, ինչպես նաև վճարահաշվարկային կազմակերպությունների լիցենզիաների գրանցամատյանի ձևը, վարման կարգը, դրանում ներառվող տեղեկությունները» կանոնակարգ 17/01-ի 112-րդ կետում կատարել հետևյալ փոփոխությունները.

---

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2012 թ. փետրվարի 7-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 20.02.2012 թ. (ՀՀԳՏ N6 (419), 01.03.2012):

1) առաջին պարբերությունից հանել «հեռախոսով կամ» բառերը,

2) 2-րդ ենթակետը ուժը կորցրած ճանաչել,

3) 3-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.
«3) Հերթագրվելու համար թեկնածուները հայտնում են հետևյալ տեղեկությունները.
ա. անուն, ազգանուն,
բ. որակավորման տեսակ,
գ. քննությանը մասնակցելու ամիս, օր, ժամ՝ ըստ հրապարակված ցանկի (ցանկության դեպքում),
դ. հեռախոսահամար,
ե. անձնագրի կամ անձը հաստատող այլ փաստաթղթի տվյալները,
զ. էլեկտրոնային փոստի (առկայության դեպքում) հասցեն»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2012 թվականի ապրիլի 1-ին:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
10 փետրվարի 2012 թ., N 37-Ն

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄԸ

*Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի հոկտեմբերի 30-ի թիվ 344-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին**

Նպատակ ունենալով որակավորման քննություններին թեկնածուների հերթագրման կարգը դարձնել առավել արդյունավետ և իրականացնել այն միասնական ձևով, հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետը և ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով և 70-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 2007 թ. հոկտեմբերի 30-ի ««Ապահովագրության ոլորտում լիցենզավորման, գրանցման, համաձայնության, թույլտվության տրամադրման, մասնագիտական համապատասխանության ստուգման և որակավորման կարգը» կանոնակարգ 3/01-ը հաստատելու մասին» թիվ 344-Ն որոշմամբ հաստատված «Ապահովագրության ոլորտում լիցենզավորման, գրանցման, համաձայնության, թույլտվության տրամադրման, մասնագիտական համապատասխանության ստուգման և որակավորման կարգը» կանոնակարգ 3/01-ի մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) 126-րդ կետից հանել «կամ հեռախոսով» բառերը,

2) 126.2 կետն ուժը կորցրած ճանաչել,

3) 126.3 կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.
«3) Հերթագրվելու համար թեկնածուները հայտնում են հետևյալ տեղեկությունները.
ա. անուն, ազգանուն,
բ. որակավորման տեսակ,
գ. քննությանը մասնակցելու ամիս, օր, ժամ՝ ըստ հրապարակված ցանկի (ցանկության դեպքում),
դ. հեռախոսահամար,
ե. անձնագրի կամ անձը հաստատող այլ փաստաթղթի տվյալները,
զ. էլեկտրոնային փոստի (առկայության դեպքում) հասցեն»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2012 թվականի ապրիլի 1-ին:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
10 փետրվարի 2012 թ., N 38-Ն

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2012 թ. փետրվարի 7-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 20.02.2012 թ. (ՀՀՊՏ N6 (419), 01.03.2012):

ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ
ԱՄՓՈՓԱԳԻՐ

(ՓԵՏՐՎԱՐ 2012)

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի «ՀՀ ԿԲ տեղեկագիր» ամենամսյա պարբերականի «Դրամավարկային ամփոփագիր» բաժինը ներառում է ՀՀ ԿԲ խորհրդի 2012 թվականի մարտի 6-ի նիստի «2012 թվականի մարտի վերաֆինանսավորման տոկոսադրույքի վերաբերյալ» արձանագրությունը, ինչպես նաև դրամավարկային, արտաքին, հարկաբյուջետային և իրական հատվածների, ՀՀ վճարահաշվարկային և ֆինանսական համակարգերի ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվություն:

Իրական հատվածի (բացառությամբ բնականոն գնաճի) և արտաքին հատվածում ընդգրկված ապրանքների արտահանման ու ներմուծման վերաբերյալ տեղեկատվության աղբյուրը ՀՀ ազգային վիճակագրական ծառայությունն է (http://www.armstat.am), իսկ հարկաբյուջետային, արտաքին հատվածի, դրամավարկային և ֆինանսական վիճակագրության, բնականոն գնաճի և ՀՀ վճարահաշվարկային համակարգի վերաբերյալ տեղեկատվության աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկը: Դրամավարկային և ֆինանսական վիճակագրությունում ընդգրկված է դրամավարկային ցուցանիշների, ֆինանսական շուկայի և ֆինանսական համակարգի հիմնական ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվություն:

Վճարային հաշվեկշիռը, միջազգային ներդրումային դիրքը և արտաքին պարտքը կազմվում և հրապարակվում են եռամսյակային կտրվածքով՝ փետրվար, մայիս, օգոստոս և նոյեմբեր ամիսների տեղեկագրերում:

Դրամավարկային ցուցանիշները կազմված են համաձայն ՀՀ ԿԲ «ՀՀ դրամավարկային և ֆինանսական վիճակագրության ձեռնարկի», որը տեղադրված է ՀՀ ԿԲ «Տնային էջի» «Վիճակագրություն» բաժնում:

Դրամավարկային ցուցանիշների, միջազգային պահուստների և արտաքին պարտավորությունների վերաբերյալ տեղեկատվությունը ենթակա է վերանայման եռամսյակային և տարեկան կտրվածքով՝ նշված ցուցանիշներում ԿԲ եզրափակիչ շրջանառության գործառնություններն ընդգրկելու նպատակով: Եռամսյակային տվյալները վերանայվում են (համարվում են վերջնական) հաշվետու եռամսյակի ավարտից երկու ամիս հետո, իսկ տարեկան տվյալները՝ հաշվետու տարվա ավարտից երեք ամիս հետո:

Վիճակագրական տվյալների հրապարակման ժամանակացույցը տեղադրված է ՀՀ ԿԲ «Տնային էջի» «Վիճակագրություն» բաժնում:

Հարցերի և առաջարկությունների համար դիմել
Վիճակագրության վարչություն
Հեռախոս՝ (374 10) 592-562
Ֆաքս՝ (374 10) 592-564
էլ. փոստ՝ sd.mpd@cba.am

«Դրամավարկային ամփոփագիրը», ինչպես նաև ՀՀ ԿԲ այլ հրապարակումները տեղադրվում են ՀՀ կենտրոնական բանկի «Տնային էջում», որի հասցեն է՝
http://www.cba.am

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

2012 թվականի մարտի վերաֆինանսավորման տոկոսադրույքի վերաբերյալ 19
Իրական հատվածի ցուցանիշներ 22
Մակրոտնտեսական ցուցանիշներ
Գների ինդեքսներ
Գնաճ
Գնաճին առավելապես նպաստած ապրանքախմբերը
Բնականոն գնաճ
Բնականոն գնաճին առավելապես նպաստած ապրանքատեսակները
Արտաքին հատվածի ցուցանիշներ 25
Ապրանքների արտահանում և ներմուծում
Ըստ երկրների ՀՀ բանկային համակարգի միջոցով ֆիզիկական անձանց փոխանցումները
Ըստ երկրների ՀՀ բանկային համակարգի միջոցով ֆիզիկական անձանց ոչ առևտրային նպատակով կատարված փոխանցումները
Դրամական փոխանցումների ներհոսքն ըստ վճարային հաշվեկշռի
Իրական և անվանական արդյունավետ փոխարժեք
ՀՀ վճարային հաշվեկշիռ (ստանդարտ ներկայացում)
ՀՀ վճարային հաշվեկշիռ (վերլուծական ներկայացում)
ՀՀ միջազգային ներդրումային դիրք
ՀՀ առևտրային բանկերի և վարկային կազմակերպությունների միջազգային ներդրումային դիրք
ՀՀ առևտրային բանկերի և վարկային կազմակերպությունների արտաքին ակտիվների և պարտավորությունների արժութային կազմը
ՀՀ համախառն արտաքին պարտք
Հայաստանի Հանրապետության միջազգային պահուստների կառուցվածքը
ՀՀ կենտրոնական բանկի արտաքին պարտավորությունների կառուցվածքը
Պետական բյուջեի ցուցանիշներ 40
Կենտրոնական բանկի և Գանձապետարանի փոխհարաբերությունները
Դրամավարկային ցուցանիշներ 41
Փողի ագրեգատներ և փողի բազմարկիչներ
Սեզոնայնորեն հարթեցված փողի ագրեգատներ
ՀՀ կենտրոնական բանկի ամփոփ ցուցանիշներ
ՀՀ առևտրային բանկերի ամփոփ ցուցանիշներ
ՀՀ վարկային կազմակերպությունների ամփոփ ցուցանիշներ
ՀՀ ավանդային կազմակերպությունների ամփոփ ցուցանիշներ
ՀՀ ավանդային կազմակերպությունների զուտ արտաքին ակտիվներ
Դոլարայնացման մակարդակը Հայաստանի Հանրապետությունում
Ֆինանսական շուկա 51
Տոկոսադրույքներ
Բանկային տոկոսի հաշվարկային դրույքը
Ֆինանսական շուկայում ՀՀ ԿԲ գործառնությունների տոկոսադրույքները
Ֆինանսական շուկայում ՀՀ ԿԲ գործառնությունների ծավալը
ՀՀ ԿԲ կողմից կնքված արժութային սվոփ գործառնությունների ծավալները և միջին տոկոսադրույքները
Ռեպո շուկայի շրջանառությունը
Առևտրային բանկերի կողմից տնտեսությունից ներգրավված ավանդների և տրամադրված վարկերի ծավալները և տոկոսադրույքները
Բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից ՀՀ դրամով և արտարժույթով տրամադրված վարկերի տոկոսադրույքներն ըստ մարզերի
Պետական կարճաժամկետ պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման ծավալները և եկամտաբերությունը
Պետական միջին ժամկետայնության արժեկտրոնային պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման ծավալները և եկամտաբերությունը
Պետական երկարաժամկետ արժեկտրոնային պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման ծավալները և եկամտաբերությունը
ՊՊ երկրորդային շուկայում իրականացված գործառնությունները
Պետական (գանձապետական) պարտատոմսերում ներդրողների կառուցվածքը

ՀՀ ԿԲ կողմից արժութային շուկայում իրականացված գործառնությունները
Առևտրային բանկերի կողմից արժութային շուկայում իրականացված գործառնությունները
ՀՀ ֆոնդային բորսայում արտարժութային գործառնությունների ծավալները
Արժութային շուկայում ձևավորված ՀՀ դրամ/ԱՄՆ դոլար միջին փոխարժեքը
Արժութային շուկայում ձևավորված ՀՀ դրամ/եվրո միջին փոխարժեքը
Արժութային շուկայում ձևավորված ՀՀ դրամ/ՌԴ ռուբլի միջին փոխարժեքը
Վարկային ներդրումներ 68
Առևտրային բանկերի վարկերն ըստ տնտեսության հատվածների
Առևտրային բանկերի վարկային ներդրումներն ըստ ժամկետայնության
Առևտրային բանկերի վարկային գործառնությունների գործիքակազմը
Առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներին տրված վարկերի ճյուղային կառուցվածքը
Առևտրային բանկերի չաշխատող ակտիվների տեսակարար կշիռն ըստ ոլորտների
ՀՀ առևտրային բանկերի ընդհանուր միջբանկային ավանդները և վարկերը
Վարկային կազմակերպությունների վարկերն ըստ տնտեսության հատվածների
Վարկային կազմակերպությունների վարկային ներդրումներն ըստ ժամկետայնության
Վարկային կազմակերպությունների վարկային գործառնությունների գործիքակազմը
Վարկային կազմակերպությունների կողմից ռեզիդենտներին տրված վարկերի ճյուղային կառուցվածքը
Առևտրային բանկերի ավանդներ 79
Առևտրային բանկերի ավանդներն ըստ տնտեսության հատվածների
Ֆինանսական կազմակերպությունների հիմնական ցուցանիշներ 81
Ֆինանսական կազմակերպությունների քանակը և կառուցվածքը
ՀՀ առևտրային բանկերի հիմնական ցուցանիշները և դրանց փոփոխությունը
Բանկային համակարգի գործունեության հիմնական տնտեսական նորմատիվների մեծությունը
ՀՀ վարկային կազմակերպությունների հիմնական ցուցանիշները և դրանց փոփոխությունը
Վարկային կազմակերպությունների ընդհանուր կապիտալի համարժեքության նորմատիվի մեծությունը
Ներդրումային ծառայություններ մատուցող ընկերությունների հիմնական ցուցանիշներ
Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց կողմից կնքված գործարքներ
Հավատարմագրային կառավարման վերցված միջոցներ
Պահառության վերցված արժեթղթեր
Գրավատների ցուցանիշներ
Արտարժույթի փոխանակման կետերի կողմից իրականացված գործառնություններ
Վճարահաշվարկային համակարգ 86
Կենտրոնական բանկի վճարահաշվարկային համակարգերով կատարված դրամական փոխանցումներ
ՀՀ տարածքում անկանխիկ վճարային գործիքներով բանկային համակարգում իրականացված փոխանցումներ
ՀՀ առևտրային բանկերի և օտարերկրյա բանկերի կողմից թողարկված վճարային քարտերով իրականացված գործառնությունները ՀՀ տարածքում ըստ սպասարկման միջոցների
ՀՀ բանկերի կողմից թողարկված քարտերով իրականացված գործառնություններն արտասահմանում

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ (06.03.2012)

2012 թվականի մարտի վերաֆինանսավորման տոկոսադրույքի վերաբերյալ

2012 թվականի մարտի 6-ի ՀՀ ԿԲ խորհրդի նիստին մասնակցում էին՝
ՀՀ ԿԲ նախագահ Ա. Ջավադյանը, նախագահի տեղակալ Ն. Երիցյանը,
խորհրդի անդամներ Ա. Մկրտչյանը, Օ. Աղասյանը, Ա. Չիլինգարյանը, Վ. Աբրահամյանը

Խորհրդի նիստում, որը սկսվեց իրավիճակային հաշվետվության ներկայացմամբ, քննարկվեցին գնաճի, արտաքին միջավայրի, իրական, հարկաբյուջետային և դրամավարկային հատվածների զարգացումները: 2012 թվականի փետրվարին 12-ամսյա գնաճը կազմել է 3%՝ պահպանվելով 4% նպատակային մակարդակի ±1.5 տոկոսային կետ տատանումների թույլատրելի միջակայքում:

Ըստ պաշտոնական վիճակագրության՝ 2012 թվականի փետրվարին, նախորդ ամսվա համեմատությամբ, արձանագրվել է 0.9% գնանկում: Պարենային ապրանքների գները նվազել են 1.9%-ով՝ հիմնականում մրգերի (3.7%) և բանջարեղենի (10.7%) գների անկման արդյունքում՝ նպաստելով ամսական ցուցանիշին 1 տոկոսային կետով: Ոչ պարենային ապրանքների գներն աճել են 0.2%-ով, իսկ ծառայությունների սակագները մնացել են անփոփոխ:

2012 թվականի հունվարին տնտեսական ակտիվության ցուցանիշը (ՏԱՑ) կազմել է 4.4%, որը ձևավորվել է տնտեսության բոլոր ճյուղերում թողարկման ծավալների աճի արդյունքում: ՏԱՑ-ի բարձր ցուցանիշներ են արձանագրվել արդյունաբերության ճյուղում (21%) և ծառայությունների ոլորտում (6.7%), ավելի ցածր՝ գյուղատնտեսության ճյուղում (1.9%) և շինարարությունում (0.5%):

Արտաքին ապրանքաշրջանառությունը բնութագրող ցուցանիշները հետևյալն են. 2012 թ. հունվարին ՀՀ արդյունաբերության բարձր աճի պայմաններում արտահանման իրական ծավալները շարունակել են աճել, սակայն պայմանավորված նրանով, որ արտահանվող հիմնական մետաղների միջին գները հունվարին ցածր են եղել նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ, արտահանման (ՖՕԲ) դոլարային աճը, 2011 թ. հունվարի համեմատությամբ, կազմել է ընդամենը 0.4%, իսկ ներմուծման (ՍԻՖ) դոլարային աճը կազմել է 6.6%:

Ներկայացվեցին նաև ֆինանսական շուկայի փետրվարի զարգացումները. շուկայական ռեպո միջին տոկոսադրույքը հունվարի համեմատությամբ նվազել է 0.5 տոկոսային կետով և կազմել 10.9%, միջբանկային ռեպո տոկոսադրույքը՝ 0.3 տոկոսային կետով և կազմել 10.7%: Միաժամանակ, մինչև 1 տարի մարման ժամկետով պետական պարտատոմսերի առաջնային շուկայում նախորդ ամսվա համեմատ միջին տոկոսադրույքը նույնպես նվազել է և կազմել 8.9% (նվազումը՝ 1.7 տոկոսային կետ): Բորսայական միջբանկային վարկերի միջին տոկոսադրույքը նախորդ ամսվա համեմատ նվազել է 3.2 տոկոսային կետով և կազմել 7.7%: Տոկոսադրույքներն աստիճանաբար նվազում են՝ դեկտեմբերին պարտադիր պահուստավորման մեխանիզմի փոփոխության հետևանքով ժամանակավոր աճից հետո:

2012 թ. փետրվարին արտարժույթի շուկայում դրամի միջին շուկայական փոխարժեքը նախորդ ամսվա համեմատ դրսևորել է հետևյալ միտումները. ԱՄՆ դոլարի նկատմամբ այն արժեզրկվել է 0.3% տոկոսով՝ կազմելով 388.6 դրամ, եվրոյի նկատմամբ արժևորվել է 2.7%-ով՝ կազմելով 514.4 դրամ, ՌԴ ռուբլու նկատմամբ արժեզրկվել է 4.68%-ով՝ կազմելով 13.04 դրամ: Նախորդ տարվա փետրվար ամսվա համեմատ դրամի միջին շուկայական փոխարժեքը դրսևորել է հետևյալ միտումները. ԱՄՆ դոլարի նկատմամբ արժեզրկվել է 6.06%-ով, եվրոյի նկատմամբ՝ 3.07%-ով և ՌԴ ռուբլու նկատմամբ՝ 4.29%-ով:

Ֆինանսական շուկայի նկարագրված զարգացումների պայմաններում դրամավարկային ցուցանիշները փետրվարի 17-ի դրությամբ արձանագրել են հետևյալ միտումները. 12-ամսյա կտրվածքով դրամային ավանդների 40.4% աճի պայմաններում դրամային զանգվածն առաջանցիկ՝ 28.2% աճ է արձանագրել փողի զանգվածի համեմատությամբ: Արտարժութային ավանդների 12-ամսյա աճը կազմել է 21.1% (բացառելով փոխարժեքի փոփոխության ազդեցությունը՝ 14.2%): Արդյունքում, դոլարայնացման մակարդակն այդ ժամանակահատվածում նվազել է 1.4 տոկոսային կետով (ավելի քան 3.8%-ով): Պահպանվել են վարկավորման բարձր աճի տեմպերը՝ 34.4%:

Իրավիճակային հաշվետվության քննարկումից հետո խորհուրդը շարունակեց քննարկումներն արտաքին և ներքին մակրոտնտեսական զարգացումների, դրամավարկային քաղաքականության ուղղությունների վերաբերյալ:

2012 թվականի փետրվարին պահպանվեցին տարեսկզբին ձևավորված համաշխարհային տնտեսական աճի հեռանկարների վերաբերյալ լավատեսական սպասումները, որոնց մասին վկայում են աշխարհի առաջատար երկրների առաջնորդող ցուցանիշները (leading indicators): Այս պայմաններում հիմնական հումքային և պարենային ապրանքների գները որոշակի աճ են արձանագրել: Նավթի գինը նախորդ ամսվա համեմատությամբ ավելացել է շուրջ 7.6%-ով՝ պայմանավորված ինչպես արդյունաբերական պահանջարկով, այնպես էլ Մերձավոր Արևելքում շարունակվող հակասություններով: Պղնձի գնի աճը նախորդ ամսվա համեմատությամբ կազմել է 4.6%:

Ըստ Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության (FAO) տվյալների՝ փետրվարին պարենային ապրանքների գների աճը հունվարի համեմատությամբ կազմել է 0.94%՝ պայմանավորված շաքարավազի, բուսական և կենդանական յուղերի, հացահատիկի գների աճով:

Համաշխարհային տնտեսական ակտիվության որոշակի վերականգնման նախանշանների, ինչպես նաև դրանց՝ դեռևս խոցելի հիմքերի վրա պահպանման պայմաններում Եվրոպական կենտրոնական բանկը փետրվարին ևս քաղաքականության տոկոսադրույքն անփոփոխ է թողել և շարունակել է իրականացնել դրամավարկային քաղաքականության ոչ ստանդարտ միջոցառումներ՝ ֆինանսական շուկա ներարկելով մեծածավալ իրացվելիություն: Չնայած դրան և Եվրոգոտում պարտքային հիմնախնդիրների լուծման վերաբերյալ ձեռնարկված միջոցառումներին՝ պահպանվում են համաշխարհային տնտեսության աճի շուրջ անորոշությունները:

Առաջիկա ժամանակահատվածի համար անփոփոխ է նաև ԱՄՆ դաշնային պահուստային համակարգի (ԴՊՀ) քաղաքականության տոկոսադրույքը: Միաժամանակ, ԴՊՀ-ն դեռևս ձեռնպահ է քանակական ընդլայնման երրորդ փուլի սպասվող մեկնարկից՝ հիմք ընդունելով տնտեսական ակտիվության դրական զարգացումները:

Խորհուրդն արձանագրեց, որ աշխարհի առաջատար մի շարք երկրներում տնտեսական ակտիվության դրական միտումների և համաշխարհային տնտեսական աճի հեռանկարների վերաբերյալ լավատեսական սպասումների պայմաններում հիմնական հումքային և պարենային ապրանքների միջազգային գները ձևավորել են թույլ գնաճային միջավայր: Բացի այդ, Մերձավոր Արևելքում աշխարհաքաղաքական խնդիրների պահպանման պարագայում գրանցվել է նավթամթերքի գների աճ, որը որպես ռիսկ նա-

խանշվել էր 2012 թվականի առաջին եռամսյակի Դրամավարկային քաղաքականության ծրագրում: Խորհուրդն այս զարգացումները դեռևս մտահոգիչ չի համարում առաջիկա ամիսներին Հայաստանում գնաճային միջավայրի վրա ազդեցության առումով: ՀՀ տնտեսության զարգացումների ազդեցությունը գնաճային միջավայրի վրա շարունակում է մնալ չեզոք ինչպես հարկաբյուջետային քաղաքականության և մասնավոր ծախսումների, այնպես էլ աշխատանքի շուկայի կողմից:

Խորհուրդն ամփոփեց, որ ՀՀ տնտեսությունում զարգացումներն ընթանում են Դրամավարկային քաղաքականության ծրագրերում ներկայացված բազային սցենարին համահունչ ինչպես ներքին, այնպես էլ արտաքին զարգացումների համատեքստում՝ թերևս վերջինիս վերաբերող որոշ ռիսկերի դրսևորմամբ:

Խորհուրդը գնահատում է, որ այս իրավիճակում մեծ հավանականությամբ 12-ամսյա գնաճը կանխատեսվող հորիզոնում կգտնվի 4% նպատակային թիրախի ±1.5 տոկոսային կետ տատանումների թույլատրելի միջակայքում: Տնտեսության զարգացման ներկա միտումների պայմաններում ԿԲ-ն կշարունակի պահպանել քաղաքականության տոկոսադրույքի 8% մակարդակը, որը գնաճային միջավայրի վրա կթողնի չեզոք ազդեցություն:

2012 թվականի մարտի 6-ի նիստում ԿԲ խորհուրդը որոշեց անփոփոխ թողնել ԿԲ վերաֆինանսավորման տոկոսադրույքը՝ 8.0%: Լոմբարդային ռեպոյի և ներգրավված միջոցների տոկոսադրույքները սահմանվում են համապատասխանաբար 11.0% և 5.0%:

ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

Ամվանում	*2012թ. հունվար*	*2012թ. հունվարի իրական աճի ինդեքսը 2011թ. հունվարի նկատմամբ (%)*	*2012թ. փետրվար*	*2012թ. փետրվարի իրական աճի ինդեքսը 2011թ. փետրվարի նկատմամբ (%)*
Տնտեսական ակտիվության ցուցանիշ	-	104.8[1]	-	106.3
Արդյունաբերական արտադրանքի ծավալը *(մլն ՀՀ դրամ)*	71597.4	121.0	77341.6	116.2
էլեկտրաէներգիայի արտադրությունը *(մլն կվտ/ժամ)*	764.2	116.9	767.5	130.3
